ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ձևավորող գնահատման ազդեցությունը սովորողների ուսումնառության վրա հարցադրումների մեթոդով

ԱՆՑԱԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՑԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն	3
Գրական ակնարկ	4
Փորձարարական հետազոտություն	6
Փորձարարական դասեր .....,,,,,	6
Փորձարարական դաս-1.	7
Փորձարարական դաս-2.	8
Վերլուծություն.....,	9
Գրականության ցանկ	10
Դասի պլան-1...	11
Դասի պլան-2...	14

Նախաբան

21-րդ դարում մարդկային քաղաքականությունն ապրում է զարգացման որակապես նոր փուլ, և սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում արմատական փոփոխություններ: Այս ամենից զատ Հայաստան աշխարհն ապրեց շատ,շատ, շատ ցավառտ ու կորուստներով 2020թվական: Փոխվեց ամեն ինչ, այդ թվում նաև իմ վերաբերմունքը աշակերտներին: Մի որոշ ժաման առաջ դասասենյակում նստած տղաների մի մասն, այսօր չկան՝ զոհվեցին հանուն մեզ, մեր վաղվա խաղաղ օրվա համար:

Եվ մեր իրականության մեջ տեղի ունեցող այս փոփոխությունների հետևանքով իջավ ուսման որակը: Փոխվեց սովորողների հետքրքրությունների շրջանակը, նրանք դասիրեն ներկա գտնվելով,ներգրավված չեն դասապրոցեսում և դա բերում է ուսման որակի անկման: Այս ամենը հաշվի առնելով, ուշադրության կենտրոնում պահելով դասապրոցեսին ներկայացվող մի շարք ավանդական և արդիական պահանջներ, մեթոդներ ու մեթոդական հնարներ, այսօր ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել դպրոցականների ներգրավվածության բարձրացնելու, մոտիվացիան ապահովելու հարցերին:

Աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար իհարկե կարելի է օգտվել շատ մեթոդներից: Ես այս հետազոտության շրջանակներում կփորձեմ պարզել սովորողների ներգրավվածության բարձրացման վրա ի՞նչ ազդեցություն է ունենում ձևավորող գնահատումը:

Գրական ակնարկ

Ձևավորող (ուսուցանող) գնահատումը ուսուցման գործընթացի կարևոր մասերից է: Այն ունի երկկողմանի բնույթ: Այն մի կողմից ուսուցչին տեղեկություն է տալիս սովորողների առաջընթացի նվաճումների, դժվարությունների մասին, մյուս կողմից տալիս է տեղեկություն, թե որքանո՞վ է արդյունավետ այն մեթոդիկան, որն ինքը կիրառում է: Այստեղից բխում է գնահատման 2 կարևոր նպատակ ՝

1. Սովորողների ուժեղ և թույլ կողմերի բացահայտում և նրանց ուսուցման աջակցություն:

2. Ուսուցման մեթոդիկաների, ուսումնական ծրագրերի արդյունավետության ստացում և կատարելագործում:

Ինչպես գիտենք, ՀՀ հանրակրթությունում այժմ գործում է գնահատման 2 հիմնական ձև միավորային և ձևավորող (ուսուցանող), որոնց ծառայում են տարբեր նպատակների: Միավորային գնահատման մասին կան տարբեր ձեռնարկներ որոնք օգտագործվում են ուսուցիչների կողմից ուսուցման գործընթացում գնահատում կատարելիս: Ինչ վերաբերվում է ձևավորող գնահատմանը, այստեղ պատկերն այլ է, այն դեռ լիովին ընկալված չէ ուսուցիչների կողմից , մեթոդական նյութերը սակավ են իսկ եղածներու դեռ հստակեցված և մշակված չեն: Այդ պատճառով էլ այն հաճախ չի կիրառվում:

Ձևավորող գնահատումը ստուգում է յուրաքանչյուր սովորողի զարգացման դինամիկան և նպաստում է ուսուցման որակի բարելավմանը: Իմ կարծիքով այն բավականին մեծ ազդեցություն ունի աշակերտների դասին ներգրավվածության գործում:

Եթե միավորային գնահատման նպատակը ուսուցման որակի վերահսկումն է, ապա ձևավորող գնահատման նպատակը ուսուցման որակի բարելավումն է,

ներգրավածության բարձրացումն է տարբեր ուղիների մշակման ճանապարհով: Այստեղ պարտադիր չէ միավորի նշանակումը: Ձևավորող գնահատման համար կարևոր է ելակետ համարել<<Յուրաքանչյուրը կարող է սովորել >> միտքը:

2.Ձևավորողի գնահատման ձևերն ու մեթոդները:

Գնահատման գործընթացն իրականացնելիս կարևոր է պահպանել գնահատման հիմնական սկզբունքները՝ վստահելիություն, հուսալիություն, անաչառություն, թափանցիկություն և այլն:

Սովորողների գիտելիքների հմտությունների և կարողությունների գնահատման համար կան տարբեր մեթոդներ, ձևեր, որոնք կարելի է կիրառել թե՛ միավորային, թե՛ ձևավորող ընթացիկ և ամփոփիչ գնահատման համար:

Առանձնացնենք հատկապես գնահատման այն մեթոդները, ձևերը ու միջոցները որոնք կարելի է հաճախ կիրառել հատկապես ձևավորող կամ ուսուցանող գնահատման նպատակով : Դրանցից են՝

1. Ուսուցչի դիտարկումը

2. Մեկնաբանությունը, աշակերտների ինքնագնահատումը, հասակակիցների գնահատում և այլն:

Այս մեթոդները կիրառելիս կարևոր են մի շարք միջոցների առկայություն ինչպիսիք են բանավոր մեկնաբանությունը, գրառումը, խորհուրդ-խրատը՝ դիտարկման թերթիկը, ինքնագնահատման, փոխադարձ գնահատման աղյուսակները և այլն, որոնք հիմնականում ստեղծում է ուսուցիչը:

Նշված մեթոդները կիրառվում են ոչ թե սովորողին գնահատելիս, այլ նրա զարգացման և դասերին ներգրավվածության մակարդակի բարձրացման համար: Գործնականում չպետք է սահմանափակվել գնահատման միայն մի մեթոդով քանի որ գնահատման յուրաքանչյուր ձև ունի իր ուսուցողական և դաստիարակչական նշանակությունը:

Գործնական համատեքստ

Նախաբանում արդեն խոսվեց այն մասին, որ ինչ-ինչ գործոններով պայմանավորված աշակերտների մոտ նկատվում է դասապրոցեսի ներգրավվածության անկում, որն է պատճառ է հանդիսանում ուսման որակի անկման: Այս հետազոտությամբ կփորձեմ պարզել(չնայած, որ ժամանակը շատ կարճ է, և արդյունքները կարող են շարունակական բնույթ չկրել),թե որքանով է ձևավորող գնահատումը անդրադառնում աշակերտների ներգրավվածության բարձրացման վրա:

5

Փորձարարական հետազոտություն Փորձարարական դասեր

Որպես թիրախային խումբ դիտարկել եմ 7րդ դասարանի աշակերտներին: Դասարանը բաղկացած է 17 աշակերտներից՝ 8տղա 9աղջիկ: Լավ սովորում են 2տղա և 3աղջիկ: 3 տղա, 2 աղջիկ սովորում են վատ, մնացածը միջին:

Այս դասարանում աշակերտների հերգրավվածության անկում եմ նկատել դեռ նախորդ տարվա վերջից: Հաշվի առնելով աշակերտների գիտելիքների, ունակությունների և հտությունների տարբեր մակարդակները միշտ էլ կիրառել եմ տարբեր մեթոդներ դասերը հագեցած ու բոլոր աշակերտներին հասանելի անցկացնելու համար: Այդ անելու համար բավականին հարմար է տարբերակված առաջադրանքների ռազմավարությունը և անհատական աշխատանքի մեթոդը: Անհատական աշխատանք 45րոպեյում 17 աշակերտի հետ բավականին դժվար է, բայց իմ փորձում համոզվել եմ, որ ամենաարդյունավետն է: Այդ իսկ պատճառով հետզոտական 3 դասերց առաջինը կսկսեմ աշակերտների հետ անհատական աշխատանքով իսկ այս 3 դասերին միավորային գնահատումը կփոխարինեմ ձևավորող գնահատումով: Չնայած,որ գնահատման այս երկու ձևերը ոչ թե իրար փոխարինում են, այլ լրացնում:

Փորձարարական դաս 1

Քանի որ սա իմ առաջին դասն էր հետազոտության ընթացքում, իսկ նախորդ տարիհամավարակով պայմանավորված խմբային աշխատանքները արգելվում էին, և երեխաները սովորել էին անհատական մոտեցման իմ մեթոդին, որոշեցի դասն անցկացնել կրկին այս ձևով: Քանի որ իմ ուշադրության կենտրոնում հերգրրավածության

բարձրացումն էր ձևավորող գնահատման միջոցով, ես ուշադրություն էի դարձնում աշակերտների ներգրավվարությանը:

Խթանման փուլում, մտագրոհի ժամանակ գրեթե բոլորը ակտիվ էին, պատասխանում էին հարցերին: Գրատախտակին Т-աձև աղյուսակ գծեցի և գրեցի նույն միանդամների գումարն ու արտադրյալը: Նորից վերհիշեցին սահմանումները: Քանի որ ասոցիացիաների մեթոդով շատ լավ են հիշում, ու չեն շփոթում իրենց իմացածը, միանդամների գումարը ներկայացրեցրեք որպես մրգերի գումարում,այսինքն 5x+7x=12x(5 խնձոր + 7 խնձոր), իսկ միանդամների արտադրյալը որ որպես մրգերի միավորումից առաջացած մուրաբա: Այս մեթոդը կիրառել եմ նախորդ տարիներին, և երեխաները միշտ հիշում են:

Մինչև ձևավորող գնահատմանը անցնելը պետք է կիրառել մեթոդներ, տեխնոլոգիաները դասը կազմակերպելու համար: Այս անգամ ընտրված էր անհատական մեթոդը: Արդեն դասի ժամանակ պարզ դարձավ, որ ինչքան էլ այս մեթոդով աշակերտները ավելի լավ են հասկանում ու յուրացնում նյութը, միևնույն է նրանց ներգրավվածությունը մնում էր

նույնը, և ամեն աշակերտ սպասում էր իր հերթին, որ գրատախտակի մոտ գրի և ըստ իրենց այդ դեպում ավելի լավ և արագ կհասկանա: Այնուամենայնիվ սասն անցավ բավականին հագեցած և դասի ժամանակ կատարվող ձևավորող գնահատում, որն ուղորդվում էր անհատական աշխատանքով և տարբերակված առաջադրանքների հատարմամաբ օգնեց աշակերտներին ներգրավվել դասին:

Փորձարարական դաս 2

Արդեն խոսեցի այն մասին, որ աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար, մինչև ձևավորող գնահատմանն անցնելը, պետք է որոշակի մեթոդներ կիրառել: Առհասարակ դասի ժամանակ մի քանի մեթոդների համադրությունը ավելի արդյունավետ է և հագեցած է դարձնում դասը:

«Ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան 10անգամ լսել» սկզբունքից ելնելով բազմանդամի ընդհանուր անդամի դուրս բերման համար պոբրիկ ցուցադրություն կազմակերպեցի

աշակերտների օգնությամբ: Երեք աշակերտների տվեցի քարտեր, որոնց վրա գրված էր բազմանդամի միանդամները, մնացած աշակերտները պետք է գտնեին այն քարտերը, որոնց վար նման միանդամներ էր գրված: Թույլ սովորող և ինձ համար առավել թիրախային համարվող աշակերտներին,այս իրենց պատկերացմաբ խաղային ձևը շատ դուր եկավ:Աշակերտները բավականին ակտիվ էին, իսկ ձևավորող գնահատումը, խրախուսումը իր հերթին նպաստեց աշակերտների ներգրավվածության բարձրացմանը: Դաս 3: Նախորդ դասի օրինակով արդեն պարզ դարձավ, որ աշակերտները դասին երգրավված են, եթե ինչ որ նոր մեթոդով, կամ իրենց համար անծանոթ ու հետաքրքի ձևով է կազմակերպվում դասը: Նոր նյութի ուսուցման համար ես միշտ նախընտրել եմ օգտվել ավանդական մեթոդներից, սակայն ժամանակի հրամայականն այլ է:

Բազմանդամների արտադրյալ թեման ավելի լավ յուրացնելու համարդասին ներկա ամենակարող աշակերտներից 4 ի միջոցող լուծեցինք և բացատրեցինք 4առաջադրանք: դասարանի մնացած աշակերտներին ավելի հեշտ բացատրելու համար(չնայած, որ աշակերտների մի մասն արդեն հասկացել էր դասը) դասրանը բաժանեցի 4 խմբի, 1ից 4 հաշվելու եղանակով: 1երը դարձան առաջինը գրատախտակի մոտ եկող աշակերտի խմբի անդամները, 2ները՝ երկրորդ և այդպես մինչև 4: Ամեն խմբից առաջադրանքը ներկայացրեցին այն աշակերտ, ով համեմատաբար թույլ էր մեծամասնությունից մավորային գնահատում այս անգամ ևս չիրականացրեցի, ամբողջ ընթացքը հագեցած էր, աշակերտները շատ ակտիվ էին:

8

Վերլուծություն

Ամփոփելով կատարված աշխատանքները՝ երկու դաս իմ դասարանում, , ուսումնասիրելով ձևավորող գնահատման վերաբերյալ նյութեր,չնայած այն հանգամանքին որ նյութերը քիչ են, և Հայաստանում էլ դեռ քիչ կիրառելի է, կարելի է ասել,որ ձևավորող գնահատումը միանշանակորեն դրական ազդեցություն է ունենում աշակերտների ներգրավվածության հարցում (հավանաբար դա հաշվի առնելով են ըստ նոր չափորոշիչների տարական դասրաններում հրաժարվում միավորային գնահատումից): Սակայն ձևավորող գնահատումը պետք է ուղորդվի մի շարք այլ

մանկավարժահոգեբանական տեխնոլոգիաներով, մեթոդներով ու հնարներով որպեսզի արդյունքն էլ ավելի երկարատև լինի, ուղղորդի աշակերտին ուսումնառության :

9

Գրականության ցանկ

Միքայելյան Հ.«Մաթեմատիկան դպրոցում»պարբերական, 2012-2015թթ Միքայելյան Հ.«մաթեմատիկական կրթություն 6» 2019թ.

Ս. Մ. Նիկոլսկի «Հանրահաշիվ 7»Երևան,Անտարես 2016

Սարգսյան Ռ. Վ. «Դպրոցական ճանաչողական գործունեության ակտիվացման հարցեր»Երևան, Լույս 1984

Դասի պլան **1**

Առարկա	Հանրահաշիվ
Դասարան	7-րդ
Ուսուցիչ	Հ.Վարդանյան
Դասի թեմա	Միանդամի և բազմանդամի արտադրյալը
Դասի տիպը	Նոր նյութի ուսուցում
Դասի նպատակը	.Զարգացնել միանդամի և բազմանդամի մասին գիտելիքները և դրանք կիրառելու հմտությունները: . Ինքնուրույն աշխատելու հմտության զարգացում: . Կարողանան հաշվել միանդամների գումարն ու արտադրյալը, կիրառել միանդամի և բազմանդամի արտադրյալ հաշվելիս:
Վերջնարդյունք	Աշակերտները կկարողանան . Սահմանել միադամ և բազմանդամ . Կատարել միանդամների գումարում և բազմապատկում . Կիրառել առաջադրանքների կատարման ժամանակ:

Բաշխիչ նյութեր	Դասագիրք
Մեթոդներ	Էվրիստիկ զրույց, մտագրոհ:
Դասի ընթացքը	
Կազմակերպչական մաս 1ր.	Ստուգել հաճախումները, դասարանի պատրաստվածությունը դասին:
Տնային աշխ. Ստուգում 2ր	Տնային աշխատանքները ստուգել ֆրոնտալ եղանակով, պատասխանել անհասկանալի հարցերին:
Խթանման փուլ 8ր.	Հարցերի միջոցով ամփոփել միանդամներ, բազմանդամներ, միանդամների գումար, միանդամների արտադրյալ հասկացությունները: Գրատախտակին T-աձև աղյուսակով գրել նույն միանդամների գումարը և արտադրյալը: Ընդգծել տարբերությունները: Առաջարկել ինքնուրույն գրել 1ս 3-ը:
Իմաստի ընկալման փուլ 8ր.	Գրատախտակին գրել միանդամի և բազմանդամի արտադրյալ հանդիսացող արտահայտություն, զուգահեռներ տանել բաշխական օրենքի հետ, հատարել բազմապատկում, նորից սահմանելով միադամների արտադրյալը:

Կշռադատման փուլ	Աշակերտներին կանչել գրատախտակի

20բ.	մոտ և լուծել 108բ,դ,գ,109բ,դ,գ,ը,110բ,դ,գ առաջադրանքները՝ առաջադրանքների պարզից-բարդ, աշակերտների թույլից- ուժեղ հերթականությամբ:
Գնահատում 3բ.	Կատարել ձևավորող գնահատում յուրաքանչյուր աշակերտի գրատախտակի մոտ գալուց հետո: Այստեղ օգտվել ձևավորող գնահատման այն էլեկտրային մտքից , ըստ որի յուրաքանչյուրը կարող է սովորել:
Տնային աշխ. հանձնարարում 1բ.	Սովորել դաս 2.5, կատարել առաջադրանքներ՝ 108ա,գ,է,109ա,գ,է,110ա,գ,է:
Անդրադարձ 2բ.	Դասի ամփոփման համար տալ հետևյալ հարցերը . Ի՞նչն են անվանում միանդամ: . Ինչպե՞ս են հաշվում նիանդամների գումարն ու արտադրյալը . ինչպե՞ս են կատարում միանդամի և եռանդամի բազմապատկում:

Դասի պլան 2

Առարկա	Հանրահաշիվ
Դասարան	7-րդ
Ուսուցիչ	Հ.Վարդանյան
Դասի թեմա	Միանդամի և բազմանդամի արտադրյալը
Դասի տիպը	Անցած նյութի ամփոփում և ամրապնդում
Դասի նպատակը	. Զարգացնել միանդամի և բազմանդամի մասին գիտելիքները և դրանք կիրառելու հմտությունները: . Կարողանան հաշվել միանդամների գումարն ու արտադրյալը, կիրառել միանդամի և բազմանդամի արտադրյալ հաշվելիս: . Կարողանան բազմանդամի ընդանուր արտադրիչը դուրս բերել փակագծից:
Վերջնարդյունք	Աշակերտները կկարողանան . Սահմանել միադամ և բազմանդամ . Կատարել միանդամների գումարում և բազմապատկում .Կկարողանան ընդանուր արտադրիչը դուրս բերել փակագծի:

Բաշխիչ նյութեր Դասագիրք,քարտեր

14

Մեթոդներ	Էվրիստիկ զրույց, մտագրոհ,պրոբլեմային ուսուցում:
Դասի ընթացքը	
Կազմակերպչական մաս 1ր.	Ստուգել հաճախումները, դասարանի պատրաստվածությունը դասին:
Տնային աշխ.	Տնային աշխատանքները ստուգել անհատական եղանակով,

իսկ III աշակերտին 3 խարտ: խարտերից յուրաքանչյուրի վրա առանձին առանձն գրված են 8,a,b,x, 6,a,c,y, 10,a,k: Կպահանջեմ աշակերտներից այն խարտերը, որոնց վրա նույն տառերն են: Իսկ գործակիցներց ընդհանուր հանելու համար կվերհիշենք ամենամեծ ընդհանուր բաժանարարը:

Կշռադատման փուլ 20ր.	Աշակերտներին կանչել գրատախտակի մոտ և լուծել 114 է-ից կ, 115ե-ից թ առաջադրանքները: 116դ,զ, առաջադրանքների համար կատարել նույն խարտային աշխատանքը, զույգերով:
Գնահատում 3ր.	Կատարել ձևավորող գնահատում , խրախուսել և ոգևորել թույլ սովորող և ֆիչ ներգրավված աշակերտներին:
Տնային աշխ. հանձ. 1ր.	Կատարել առաջադրանքներ՝ 114ա-զ,115ա-դ,116ա,գ,է:
Անդրադարձ 2ր.	Դասի ամփոփման համար տալ հետևյալ հարցերը . Ի՞նչն են անվանում միանդամ: . Ինչպե՞ս են հաշվում նիանդամների գումարն ու արտադրյալը:

● ինչպե՞ս են որոշում բազմանդամի ընդհանուր անդամը:

8բ.	միանդամների գումար, միանդամների արտադրյալ,միանդամի և բազմանդամի արտադրյալ հասկացությունները: 124է-թ առաջադրանքներով գրել մաթեմատիկական թելադրություն:
Իմաստի ընկալման փուլ 10բ.	125 է,ը,թ,ժ առաջադրանքները գրել գրատախտակին կանչելով այդ պահին դասին գտնվող 4 ամենակարող աշակերտների մջոցով: նորից անհատական բացատրել այդ 4 առաջադրանքները:
Կշռադատման փուլ 23բ.	Դասարանը բաժանել 4 խմբի՝ 1ից 4 հաշվելով: 4 խմբերում պատասղանատու նշանակել գրատախտակի մոտ եկած աշակերտներին: Խմբով կատարել 126բ,դ,զ,ը առաջադրանքները, լուծումները կներկայացնեենայն խմբի աշակերտներից որևէ մեկ,բացի ավագից:Խմբերին կհանձնարարվի նաև կատարել ոչ միավորային գնահատում:
Գնահատում 2բ.	Կատարել ձևավորող գնահատում , խրախուսել և ոգևորել թույլ սովորող և ֆիչ ներգրավված աշակերտներին:
Տնային աշխ. հանձ. 1բ.	Կատարել առաջադրանքներ՝ 124ա-դ,125ա-զ,126ա,գ,ե,է,թ:

Անդրադարձ 2բ.

Դասի ամփոփման համար տալ հետևյալ հարցերը

.Ինչպե՞ս են հաշվում բազմանդամների

արտադրյալը :

16